

### **Հարց**

**Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեություն իրականացնելիս սպասարկման ընդհանուր մակերեսը ինչպե՞ս է հաշվարկվում:**

### **Պատասխան**

Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեություն իրականացնելիս սպասարկման ընդհանուր մակերես է համարվում՝

- որևէ կերպ սահմանազատված (պատ, պարիսպ, ցանկապատ, հարթակ կամ համանման այլ ձևերով) տարածքի, կամ
- ծայրամասային (եզրային) սեղանների, տաղավարների կամ համանման ժամանակավոր այլ կառույցների (ներառյալ դրանցում մեկ կամ մի քանի սեղաններ ներառող), ինչպես նաև այլ օժանդակ կառույցների (խոհանոց, հաճախորդների ժամանցի համար նախատեսված կառույցների (հարթակներ, խաղահրապարակներ, շատրվաններ և այլն) եզրակետերով տարված առավելագույն շրջագծում ընդգրկող տարածքի մակերեսներից առավելագույնը:

### **Հարց**

**Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողի կողմից կազմակերպությանը ծառայություններ մատուցելու դեպքում, վերջինիս կողմից պահվու՞մ է, արդյոք, եկամտային հարկ:**

### **Պատասխան**

«Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին, արտոնագրային վճար վճարող չհանդիսացող անհատ ձեռնարկատերերին ծառայություններ մատուցելու դեպքում վերջիններս, որպես հարկային գործակալ, եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտային հարկը պահում (գանձում) են «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

### **Հարց**

**Կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր) գրավատուից գրավադրված և ի սեփականություն անցած գույքի՝ բանկի կողմից հետագա իրացման գործարքները հարկվո՞ւմ են, արդյոք, ԱԱՀ-ով:**

### **Պատասխան**

Կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր) գրավատուից գրավադրված և ի սեփականություն անցած գույքի՝ բանկի կողմից հետագա իրացման գործարքները ենթակա են հարկման ԱԱՀ-ով: Բացառություն է կազմում միայն բանկի սեփականություն դարձած՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի իրացման գործարքը, որը, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի, ազատվում է ԱԱՀ-ից:

### **Հարց**

**Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը ո՞ր դեպքերում է կարող դուրս գրել հարկային հաշիվ:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի և ԼՂՀ կառավարության 2009թ. հունիսի 23-ի թիվ 403-Ն որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է հարկային հաշիվ դուրս գրել ապրանքի մատակարարում համարվող և ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով՝ միայն գնորդի (կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ) պահանջով (գրավոր կամ բանավոր), և եթե այդ ֆիզիկական անձն ունի ՀՎՀՀ:

### **Հարց**

**Պարտադի՞ր է, արդյոք, հարկային հաշվի դուրս գրումը մանրածախ առևտրի և բնակչությանը ծառայությունների մատուցման ոլորտներում:**

### **Պատասխան**

Ոչ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ մանրածախ առևտրի և բնակչությանը ծառայությունների մատուցման ոլորտներում հարկային հաշիվ դուրս է գրվում միայն գնորդի պահանջով (գրավոր կամ բանավոր):

### **Հարց**

**ԼՂՀ երկքաղաքացին (այն անձը, որը ԼՂՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն) եկամտային հարկով հարկման առումով դիտվում է որպես ԼՂՀ, թե՞ օտարերկրյա քաղաքացի:**

### **Պատասխան**

ԼՂՀ երկքաղաքացին եկամտային հարկով հարկման առումով ԼՂՀ-ի համար ճանաչվում է միայն որպես ԼՂՀ քաղաքացի:

### **Հարց**

**Աշխատողին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը ո՞ր ամսվա եկամտային հարկի հաշվարկում պետք է արտացոլել:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարները արտացոլվում են այն ամսվա եկամտային հարկի հաշվարկում, որ ամսում կատարվել է վճարումը: Օրինակ՝ վարձու աշխատողը մարտի 20-25-ը գտնվում է անաշխատունակ վիճակում և անաշխատունակության նպաստը վճարվում է ապրիլի 1-ին, ապա անաշխատունակության նպաստը ներառվում է ապրիլ ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում: